ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2022 թվականի N 403 - Ա

«ՀԱՐԺԻՍԻ ՀԱՄԼԵՏ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՆՈՐԱՅՐ ԵՍԱՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի նիստի N 4 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Նորայր Եսայանի հետ 2022 թվականի հոկտեմբերի 13-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. «Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարա Մկրտչյանին 2022 թվականի հոկտեմբերի 13-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

12.10.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԱՐՄԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Համակարգի ստորագրություն
Համակարգի գրանցման համար՝ SUKIASYAN ROBERT 3712800290

2022թ. հոկտեմբերի 12
ք. Կապան